




Helsinki Final Act

1975 • ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱԿՏ • 2015





Սույն հրատարակությունը պատրաստված է Հելսինկյան եզրափակիչ ակտի՝ ԵԱՀԿ-ի հիմնարար փաստաթղթի ստորագրման քառասուն ամյակի կապակցությամբ:

© ԵԱՀԿ

Բովանդակություն

Ուղերձներ	4-7
Հելսինկյան եզրափակիչ ակտի մասին.....	8
Հելսինկի «Դեկալոգ»	9
ԵԱՀԿ-ի մասին.....	10
ԵԱՀԿ-ի ուղղությունների մասին.....	11
ԵԱՀԿ-ի գործունեության մասին	12-13
ԵԱՀԿ երևանյան գրասենյակի գործունեության հիմնական ուղղությունները	14-15
ԵԱՀԿ երևանյան գրասենյակի մասին.....	16
ԵԱՀԿ-ի մասնակից պետությունները	17
Հետաքրքիր փաստեր	18



Էդվարդ Նալբանդյան

Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարար

Այս տարի նշվում են կարևոր տարելիցներ՝ Հայոց ցեղասպանության հարյուրամյակը, Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտի 70-ամյակը և ՅԵՄԻՆԿԻԻ Եզրափակիչ ակտի ստորագրման 40-ամյակը: Այս իրադարձությունները ոչ միայն ձևավորել են մեր անցյալը, այլև ուղղորդել են մեզ ԵԱՀԿ տարածաշրջանում բաժանարար գծերից, պատերազմներից և ցեղասպանություններից զերծ համապարփակ, համագործակցային և անբաժանելի անվտանգության համայնք ստեղծելու մեր ջանքերում: ՄԱԿ-ի Կանոնադրությունում ամրագրված միջազգային իրավունքի հիմնարար նորմերի և սկզբունքների ու ՅԵՄԻՆԿԻԻ Եզրափակիչ ակտում տեղ գտած ԵԱՀԿ երեք հարթությունների համընդհանուր հանձնառությունների անշեղ իրագործումը հանդիսանում է խաղաղության և անվտանգության ապահովման հիմնական նախապայման: Այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են պետությունների միջև համագործակցությունը, ժողովուրդների իրավահավասարությունը և ինքնորոշման իրավունքը, գտնվում են Եվրոպայում խաղաղ համակեցության հիմքում: Դրանք անցել են ժամանակի փորձությունը ու արդյունավետորեն գործել և՛ խաղաղ վերափոխման, և՛ ճգնաժամային իրավիճակներում: Հայաստանը բարձր է գնահատում ԵԱՀԿ-ում առկա համագործակցությունն անվտանգության ոլորտում անհրաժեշտ բարեփոխումների, տնտեսական և բնապահպանական ծրագրերի իրականացման, ինչպես նաև մարդու իրավունքների հանդեպ հարգանքի ամրապնդման գործում: Այս տեսանկյունից ԵԱՀԿ երևանյան գրասենյակը, որը Հարավային Կովկասում ԵԱՀԿ միակ լիարժեք գրասենյակն է, շարունակում է մնալ մեր կարևոր գործընկերը:



Լամբերտո Չանյեր

ԵԱՀԿ գլխավոր քարտուղար

Մեզ հարկավոր է հասկանալ, որ մենք արագորեն փոփոխվող աշխարհում ենք ապրում, որը լի է անվտանգության ավելի բարդացող մարտահրավերներով, ուստի անհրաժեշտ է անել ամեն ինչ, որպեսզի եղած տարածայնությունները չհեռացնեն մեզ ավելի խոշորամասշտաբ, ավելի գլոբալ և անդրազգային մարտահրավերների լուծման վրա միասին աշխատելուց, որոնք ներգործում են մեր քաղաքացիների և բոլոր մասնակից պետությունների վրա առանց բացառության: Հետադարձ հայացք նետելով՝ պետք է ոգեշնչվել այն առաջնություններից, ովքեր, չնայած ժամանակի խիստ հակասություններին, մշակեցին մի տեսլական և մեզ արդեն բառասուն տարի ծառայող անվտանգության համակարգի հիմնադրման համարձակություն ցուցաբերեցին, որը, սակայն, այսօր վտանգված է: Խոսելով անձնական իմ փորձից՝ հավատած եմ, որ բոլորս կկարողանանք ջանք գործադրել, որպեսզի ետ նայելով ոգեշնչում գտնենք և առաջ շարժվենք նոր հաստատակամությամբ:



Դեսպան Անդրեյ Սորոկին

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար

Յեւսիսկայան եզրափակիչ ակտը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության հիմնաքարն է: Նրա ղեկավարը կամ տասը սկզբունքներն ուղղորդում են ինչպես մասնակից պետությունների, այնպես էլ նրանց և նրանց քաղաքացիների միջև փոխհարաբերությունները: Եզրափակիչ ակտը գերազանցեց անվտանգության ավանդական ռազմական երաշխիքները՝ ներառելով տնտեսական զարգացումը, շրջակա միջավայրին առնչվող խնդիրները, մշակութային հարցերը և մարդու իրավունքները անվտանգության մեկ ընդհանուր համապարփակ հայեցակարգի մեջ: Այն, ինչ ձեռք բերվեց Յեւսիսկիում քառասուն տարի առաջ, համագործակցության հաղթանակ էր: ԵԱՀԿ-ի շնորհիվ քաղաքական շարունակական երկխոսությունն ու երկրների միջև փոխհամագործակցությունը դարձան իրականություն: ԵԱՀԿ-ն հանդիսանում է այն հարթակը, որտեղ պետությունները ջանք են գործադրում կիսելու նույն արժեքները՝ կայունություն, բարօրություն և ժողովրդավարություն: ԵԱՀԿ պետությունների թվում Հայաստանը բարձր հեղինակություն ունի և սերտորեն ներգրավված է կազմակերպության բոլոր միջոցառումներում: Տասնհինգ տարի առաջ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հիմնադրումը նոր խթան հանդիսացավ ԵԱՀԿ շրջանակներում Հայաստանի համագործակցության համար: Իր գոյության ողջ ընթացքում գրասենյակն օժանդակել է Հայաստանի կառավարությանն ու քաղաքացիական հասարակությանը երկրում օրենսդրական բարեփոխումներին, կարողությունների զարգացմանը և ժողովրդավարական հաստատությունների ու գործընթացների բարելավմանը:



Դեսպան Արման Կիրակոսյան

ԵԱՀԿ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչության ղեկավար

Քառասուն տարի առաջ Վանկուվերից մինչև Վլադիվոստոկ ընկած տարածաշրջանի պետությունների ղեկավարները Յելսինկիում մեկնարկ տվեցին Եվրոպայում անվտանգության և համագործակցության համապարփակ համակարգի հիմնադրման պատմական գործընթացին: Արևելքի և Արևմուտքի պետությունները պարտավորվեցին երկխոսության մեջ մտնել, հանուն վստահության ամրապնդման և առճակատումից համագործակցության ու խաղաղության անցման:

1992թ. Հայաստանի Հանրապետությունը դարձավ ԵԱՀԿ/ԵԱՀԿ մասնակից պետություն: Այդ շրջանից ի վեր, Հայաստանի և ԵԱՀԿ միջև համագործակցությունը հասել է բարձր մակարդակի: Հայաստանն իր նպաստն է ունեցել ԵԱՀԿ զարգացմանը և ռազմաքաղաքական, տնտեսական-քաղաքական և մարդկային հարթություններում դրա կարողությունների, ինչպես և հակամարտություններին ու ճգնաժամերին արձագանքի գործում կազմակերպության ներուժի ամրապնդմանը:

Հայաստանի կառավարությունը հավատարիմ է ԵԱՀԿ և Երևանում դրա գրասենյակի հետ համագործակցության շարունակմանը՝ անվտանգությանը նպաստելու և Հայաստանի ժողովրդավարացման ու կայուն զարգացման գործում հետագա առաջընթացն ապահովելու նպատակով:

Հելսինկյան եզրափակիչ ակտի մասին



Քառասուն տարի
առաջ Հելսինկիում
աշխարհի առաջնորդները
հանդիպեցին, որպեսզի
ստորագրեն մի եզակի
փաստաթուղթ, որը հեղափոխեց
բազմակողմ անվտանգության
մասին եղած բոլոր
պատկերացումները:

Հելսինկյան եզրափակիչ
ակտը հակամարտության
շուրջ համագործակցության
պատմական հաղթանակ էր, որ
կապեց Արևելքը Արևմուտքին և
ազդարարեց Սառը պատերազմն
ավարտող նոր փուլ: Այսօր այն
շարունակում է մնալ ԵԱՀԿ-ի ամբողջ
աշխատանքը ուղղորդող փաստաթուղթ:

*Ձախից աջ՝ Գերմանիայի դաշնային հանրապետության կանցլեր Ֆեմոտ Շմիդտը, Գերմանիայի Սոցիալիստական միություն
կուսակցության առաջին քարտուղար Էրիխ Յոնեքերը, ԱՄՆ նախագահ Ջերալդ Ֆորդը, Ավստրիայի կանցլեր Բրունո
Կրեյսկին, 1 օգոստոսի 1975թ.: (Բուկոնսարիսի/Ֆորսթ Շտուրմ)*



*Արևելքը հանդիպում է Արևմուտքին՝ ԱՄՆ նախագահ
Ջերալդ Ֆորդը և ԽՍՀՄ գերագույն քարտուղար Լեոնիդ
Բրեժնևը՝ թարգմանիչ Վիկտոր Սուխոդոևը, Հելսինկի,
1975թ.: Նրանց կողքին են պետքարտուղար Հենրի
Քիսինջերը՝ ձախից, և արտգործնախարար Անդրեյ
Գրոմիկոն՝ աջից: (Ջերալդ Ֆորդի անվան զրադարան)*



ԵԱՀԿ-ի մասին



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը անվտանգության խնդիրներով զբաղվող քաղաքական տարածաշրջանային ամենամեծ կազմակերպությունն է: Այսօր այն իր կազմում ընդգրկում է 57 մասնակից պետություններ Եվրոպայից, Կենտրոնական Ասիայից և Հյուսիսային Ամերիկայից: 57

մասնակից բոլոր երկրներն օժտված են իրավահավասար կարգավիճակով, իսկ որոշումները ընդունվում են կոնսենսուսի՝ ընդհանուր համաձայնության սկզբունքով և ունեն քաղաքական ուժ, իրավականորեն պարտադրող չեն: ԵԱՀԿ-ն գործում է հանուն 57 պետությունների կայունության, բարօրության և ժողովրդավարության՝ համընդհանուր արժեքների շուրջ քաղաքական երկխոսության և գործնական աշխատանքների միջոցով՝ հետամուտ բարելավմանը



2,537
անձնակազմ



€ 142,304,100 բյուջե



57 մասնակից
պետություններ



1 նպատակ՝
անվտանգություն և
համագործակցություն

1994 – Բուդապեշտ

ԵԱՀԽ ➡ ԵԱՀԿ

- տարածաշրջանային անվտանգության պայմանավորվածություն
- համագործակցություն
- լայնատարած անդամակցություն
- կոնսենսուսի՝ ընդհանուր համաձայնության սկզբունք
- քաղաքական որոշումներ
- դաշտային առաքելությունների ընդարձակ ցանց

- վաղ ազդարարում
- հակամարտության կանխարգելում
- ճգնաժամի կառավարում
- հետհակամարտային վերականգնում

ԵԱՀԿ-ի ուղղությունների մասին

Ռազմաքաղաքական

ԵԱՀԿ-ի ռազմաքաղաքական ուղղությունը ձգտում է ամրապնդել ռազմական անվտանգությունը՝ խթանելով հրապարակայնությունը, թափանցիկությունն ու համագործակցությունը: ԵԱՀԿ-ն ստեղծել է սպառազինությունների վերահսկողության և վստահության ամրապնդման միջոցառումների՝ աշխարհում ամենազարգացած համակարգը: Լայն առումով այն կենտրոնանում է պաշտպանության ոլորտում բարեփոխումների, ուստիկանության գործունեության, թեթև զենքի ու փոքր սպառազինությունների և սովորական զինամթերքի անվտանգ պահեստավորման և ոչնչացման վրա:

Մարդկային

Հարատև անվտանգությունն անհնար է առանց մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի: ԵԱՀԿ-ն օգնում է իր մասնակից պետություններին կառուցել ժողովրդավարական հաստատություններ, անցկացնել ազատ, արդար և թափանցիկ ընտրություններ, խթանել գենդերային հավասարությունը, ապահովել մարդու իրավունքների, մամուլի ազատության, փոքրամասնությունների իրավունքների, օրենքի գերակայության հանդեպ հարգանք, խրախուսել հանդուրժողականությունը և խտրականության բացառումը:

Տնտեսական - Բնապահպանական

Տնտեսական բարեկեցությունն ու բնապահպանական խնդիրները անվտանգության առանցքային գործոններից են: ԵԱՀԿ-ն նպաստում է տնտեսական համագործակցությանը, բնապահպանական իրազեկվածությանն ու արդյունավետ կառավարմանը և խթանում ընդհանուր բնական պաշարների օգտագործման շուրջ համագործակցությունը:

ԵԱՀԿ-ի անվտանգությանը վերաբերող բազմաբնույթ գործունեություններ

Մամուլի ազատություն և զարգացում

Սպառազինությունների վերահսկում

Ազգային փոքրամասնությունների խնդիրներ

Տնտեսական գործունեություն

Ընտրություններ

Հակամարտությունների կանխարգելում և լուծում

Կրթություն

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար



Արդյունավետ
կառավարում

Ռոմա և Սինթի

Գենդերային
հավասարություն

Ժողովրդավարացում

Հանդուրժողականություն
և խտրականության
դեմ պայքար

Ռազմական ոլորտի
բարեփոխում և
համագործակցություն

Օրենքի
գերակայություն

Անդրազգային
սպառնալիքներ

Մարդու
իրավունքներ

Բնապահպանական
գործունեություն

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի գործունեության հիմնական ուղղությունները



- Ոստիկանության ոլորտում բարեփոխումներ
- Չինված ուժերի ժողովրդավարական վերահսկում

- Կարգավորիչ ոլորտի բարեփոխում
- ՓՄՁ ոլորտի զարգացում
- Մարզերի զարգացում
- Օրիուս կոնվենցիայի կատարում
- «Շրջակա միջավայր և անվտանգություն» նախաձեռնություն

- Աջակցություն Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին
- Դատական բարեփոխումներ
- Զրեակատարողական հաստատությունների բարեփոխումներ
- Ազգային փոքրամասնություններ
- Հանրային իրազեկում և կրթություն

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի գործունեության հիմնական ուղղությունները



- Աջակցություն ընտրություններին
- Ազատ հավաքների իրավունք
- Պետական կառավարման համակարգի կարողությունների զարգացում
- Կոռուպցիայի դեմ պայքար

- Մամուլի և տեղեկատվության ազատություն
- Գենդերային հավասարություն
- Երիտասարդություն/Կրթություն
- Միգրացիայի կառավարում և թրաֆիքինգի դեմ պայքար

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի մասին

Գրասենյակի ղեկավար՝ դեսպան Անդրեյ Սորոկին
Անձնակազմ՝ 7 միջազգային 40 տեղի աշխատակից
Բյուջե՝ € 2,862,000

Սունդուկյան 64/1, Երևան 0012
Հեռ.՝ (374 10) 229610/11/12/13

yerevan-am@osce.org
www.osce.org/yerevan

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը հիմնադրվել է ԵԱՀԿ մշտական խորհրդի՝ 1999 թ.-ի հուլիսի 22-ին ընդունած որոշմամբ, իսկ սկսել է գործել 2000 թ.-ի փետրվար 16-ից, երբ ԵԱՀԿ-ի և Հայաստանի արտաքին գործերի նախարարության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագիրը վավերացվեց Հայաստանի Ազգային ժողովի կողմից: Գրասենյակը ունի ծրագրերի իրականացման ներկայություն Սյունիքում:

Առաքելությունը

Գրասենյակը օգնում է Հայաստանին զարգացնել իր ժողովրդավարական հաստատությունները և ամրապնդել բաղադրացիական հասարակությունը: Սա ներառում է գործողություններ, որոնք ընդգրկում են այնպիսի տարբեր ոլորտներ, ինչպիսիք են օրենսդրական բարեփոխումները, կոռուպցիայի և թափափուկության դեմ պայքարը, բնապահպանական գործունեությունը, մարդու իրավունքների իրազեկման բարձրացումը, լրատվամիջոցների ազատությունը, գենդերային հավասարությունը, աջակցությունը ոստիկանությանը և զինված ուժերի բարեփոխումը:



Մանդատը

Գրասենյակը լիազորված է աջակցել Հայաստանին ԵԱՀԿ սկզբունքների և պարտավորությունների իրականացմանը բոլոր երեք ուղղություններով՝ ԵԱՀԿ գործունեության անվտանգության և կայունության շրջանակներում: Գրասենյակը համագործակցում է տեղի իշխանությունների, համալսարանների, գիտահետազոտական հաստատությունների և ՀԿ ներկայացուցիչների հետ: Այն աջակցություն է տրամադրում ՀՀ կառավարությանը կատարելագործելու պետական մարմինների կարողությունները և խթանում տեղեկատվության փոխանակումը ԵԱՀԿ հաստատությունների ու համապատասխան պետական ատյանների միջև:

ԵԱՀԿ մասնակից պետությունները

- | | | |
|---|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Ադրբեջան • Ալբանիա • Ամերիկայի Միացյալ Նահանգներ • Անդորրա • Ավստրիա • Բելառուս • Բելգիա • Բոսնիա և Հերցեգովինա • Բուլղարիա • Գերմանիա • Դանիա • Էստոնիա • Թուրքիա • Թուրքմենստան • Իռլանդիա • Իսլանդիա • Իսպանիա • Իտալիա | <ul style="list-style-type: none"> • Լատվիա • Լեհաստան • Լիխտենշտեյն • Լիտվա • Լյուքսեմբուրգ • Խորվաթիա • Կանադա • Կիպրոս • Հայաստան • Հունաստան • Հունգարիա • Ղազախստան • Ղրղզստան • Մալթա • Նախկին հարավսլավական Մակեդոնիայի Հանրապետություն • Մեծ Բրիտանիա • Մոլդովա • Մոնակո • Մոնղոլիա • Մոնտենեգրո • Նիդեռլանդներ • Նորվեգիա | <ul style="list-style-type: none"> • Շվեդիա • Շվեյցարիա • Չեխիայի Հանրապետություն • Պորտուգալիա • Ռումինիա • Ռուսաստանի Դաշնություն • Սան Մարինո • Սերբիա • Սլովակիա • Սլովենիա • Սուրբ Աթոռ • Վրաստան • Տաջիկստան • Ուզբեկստան • Ուկրաինա • Ֆինլանդիա • Ֆրանսիա |
|---|--|---|



ՀԵՏԱՔԻՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ



Բանակցությունների համար ժնև ժամանած դիվանգետներն ու գործիչները տեղեկացվել էին, որ բանակցությունները տևելու են ընդամենը մի քանի շաբաթ, այնինչ դրանք իրականում ձգվեցին գրեթե երկու տարի:



Եղան մասնակիցներ, ովքեր ամուսնացան միմյանց հետ ԵԱՀԽ (Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցություն) բանակցությունների ժամանակահատվածում: Կային նույնիսկ ամուսնություններ Արևելքի և Արևմուտքի պատվիրակների միջև:



Ժնևյան բանակցությունների ընթացքում գրանցվեցին 2,400 հանդիպումներ: 650 պատվիրակներ և քարտուղարական անձնակազմ արտադրեցին 4,660 փաստաթուղթ: Այս փաստաթղթերը, որոնք թարգմանվեցին խորհրդաժողովի վեց լեզուներով, իրենց ծավալով կազմեցին 41 տոննա կամ 9 միլիոն էջ: Այս պատճառով բանակցությունների հիմնական ընթացքը պահպանելու խնդիր առաջացավ: Այդ ժամանակ, սակայն, եղավ շրջադարձ. 1975 թ. ամռանը կողմերը հասան կոնսենսուսի, որով թղթերի այդ մեծ կույտն ամփոփվեց մոտ 65 էջանոց եզրափակիչ ակտում:



Յելսինկյան եզրափակիչ ակտի ստորագրումը լուսաբանում էին 1,110 լրագրողներ, իսկ խորհրդաժողովի անվտանգությունն ապահովում էին 400 զինվորներ և 150 ոստիկաններ:



Եվրոպայում անվտանգության
և համագործակցության
կազմակերպությունը գործում է հանուն
57 պետությունների կայունության,
բարօրության և ժողովրդավարության՝
համընդհանուր արժեքների շուրջ
քաղաքական երկխոսության և
գործնական աշխատանքների միջոցով՝
հետամուտ բարելավմանը:



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ